## Արձանագրություն N 2-2

**ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-26/8 ծածկագրով Արթուր Ալեքսանյանի անվան նոր սպորտային համալիրի կառուցման մնացորդային աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան 15.05.2026թ.
ժամը 09:45

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Լ. Մելիքյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Կ. Բրուտյան |
| | Է. Առուստամյան |
| | Ա. Աչոյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ն. Նիկոլյան |

Բացակայում էր գնահատող հանձնաժողովի անդամ՝ Հ. Պապյան

### 1. Հայտերի գնահատման մասին

----------------------------------------------------------------------
(Լ. Մելիքյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 67-րդ կետի համաձայն մասնակիցների կողմից ներկայացված տվյալների իսկությունը ստուգելու նպատակով գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել իրավասու մարմիններին: Բացառությամբ ՀՀ առողջապահության և պաշտպանության նախարարությունների՝ հարցում ուղարկած մյուս մարմինների կողմից եզրակացությունները ստացվել են:

1.2 Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի և ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-26/8 ծածկագրով հրավերի 8.2 կետի պահանջները, այն է՝ գնային առաջարկը ներկայացվել է գնման գնից բարձր, գնահատող հանձնաժողովը որոշեց «Մեծն Էրիկ» ՍՊԸ, «ՆԱՎԱՍԱՐԴ ՇԻՆԱՐԱՐ» ՍՊԸ և «ԱԼԳԱՐԵ» ՍՊԸ ՀԳ-ի հայտը մերժել:

1.3 «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ հրավերով պահանջվող հինգ նմանատիպ պայմանագրերից ներկայացրել է չորսը:

1.4 Հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և ծանուցել «Բաղրամյանշին» ԲԲԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 18.05.2026թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում շտկում ներկայացվելու դեպքում, հայտը կգնահատվի բավարար, հակառակ դեպքում այն կգնահատվի անբավարար և կմերժվի: Արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ շտկումն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-26/8 ծածկագրով հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի tender4@minurban.am էլ. փոստին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-4 դեմ-0:*

## 2. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

---

(Լ. Մելիքյան)

2.1 Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել արձանագրված անհամապատասխանությունը մասնակցի կողմից շտկելուց հետո, բայց ոչ ուշ քան 19.05.2026թ. ժամը 09:30-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:*

Հանձնաժողովի նախագահ՝ ------------------------------------------------ Լ. Մելիքյան

Անդամներ՝ ------------------------------------------------ Կ. Բրուտյան

------------------------------------------------ Է. Առուստամյան

------------------------------------------------ Ա. Աչոյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ------------------------------------------------ Ն. Նիկոլայան